ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Միլլեննիում Ֆորս-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/75 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
7	Փոքր բացվող բազմոց՝ արտաքին չափերը պետք է կազմեն ոչ պակաս, քան 120 x 90 x 90 սմ: Բազմոցի նստատեղի բարձրությունը հատակից՝ առնվազն 45 սմ: Կտորը՝ բարձրորակ վելյուրե գործվածքից, լինի մաշվածքադիմացկուն՝ հեշտ խնամք ապահովելու համար: Ներքին կառուցվածքը պետք է պատրաստված լինի անհատական զսպանակային բլոկից և բարձր խտության պոլիուրեթանային շերտից, որոնք ապահովում են օրթոպեդիկ հարմարավետություն և երկարատև ծառայության ժամկետ: Բացման մեխանիզմը՝ եվրոգիրք տիպի, որը հնարավորություն է տալիս բազմոցը արագ և հուսալի ձևով վերափոխել մահճակալի: Քնելու մասի չափերը՝ ոչ պակաս, քան 90 x 195 սմ, համապատասխան բազմոցի արտաքին չափսերին: Բազմոցը պետք է ունենա հագուստի ներքին պահոց, նախատեսված անկողնային պարագաների կամ այլ իրերի պահպանման համար: Բազմոցը պետք է ունենա մեկ ամբողջական բարձ՝ ներառված համալրման մեջ: Բազմոցի ապրանքանիշը Մեբելգրադ Էլեգիա կամ Ստոլլայն կամ Իմպերիալ: Ապրանքը գնորդի հասցե է մատակարարվելու քանդված վիճակում՝ ամբողջությամբ կցամասերով, գործարանային ստվարաթղթե և պաշտպանիչ փաթեթավորման մեջ, որտեղ յուրաքանչյուր տարր լրացուցիչ ապահովված կլինի հաստ թղթով կամ փրփրապատ շերտերով՝ տեղափոխման ընթացքում հնարավոր վնասվածքներից պաշտպանելու համար: Հավաքումն իրականացվելու է շահառուի բնակարանում՝ մատակարարի ուժերով: Մատակարարի կողմից պետք է տրամադրվի առնվազն 6 ամիս երաշխիք, իսկ մատակարարման պահին արտադրողից կամ մատակարարից պահանջվում է ներկայացնել ապրանքի համապատասխանության հավաստագրեր և սերտիֆիկատներ, որոնք հաստատում են դրա համապատասխանությունը գործող տեխնիկական

	նորմերին և ստանդարտներին։ Մատակարարումը կատարել անհրաժեշտ քանակներով՝ պատվիրատուի նախնական պահանջի (հայտի) հիման վրա՝ այն ներկայացվելուց հետո 3-օրյա ժամկետում։ Նախնական հայտը ներկայացվում է էլեկտրոնային փոստի միջոցով։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Միլլեննիում Ֆորս ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/75 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
7	